ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 19.03.2026թ. հ. 66-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Բարձրացված հարցերն ուսումնասիրվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության մասնագետների կողմից:

Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջան հ.2/4 շենքի 1-ին և 3-րդ մուտքերի նկուղների կոյուղագծերը շենքի կառավարման մարմին համատիրության կողմից փոխարինվել են նորով, կաթոցներ առկա չեն, իսկ հարակից դիտահորերի երբեմն առաջացող խցանումները հնարավորինս սեղմ ժամկետում վերացվում են: Մուտքերում պատուհաններն առկա են, իսկ 1-ին մուտքի աստիճանները 2025 թվականին վերանորոգվել են համատիրության կողմից:

Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջան հ.2/3 շենքի մուտքի վերանորոգման աշխատանքները ներառված են համատիրության 2026 թվականի ծրագրում, իսկ տանիքի վերանորոգման համար Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից նյութերի ձեռքբերում իրականացնելուց հետո այն կտրամադրվի համատիրությանը, որն էլ իր միջոցներով կիրականացնի վերանորոգման աշխատանքները:

Ավան-Առինջ 1-ին միկրոշրջան հ.3/12 շենքի մուտքի վերանորոգման աշխատանքները ներառված են համատիրության 2026 թվականի ծրագրում:

Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջան հ.1/13 և հ.1/7 շենքերի ջրահեռացման ներքին ցանցը գտնվում է աշխատանքային վիճակում, սակայն շենքերին հարակից դիտահորերը հաճախակի խցանվում են, որը հնարավորինս սեղմ ժամկետում վերացվում է:

Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջան հ.1/14 շենքի շքամուտքի աստիճանների վերանորոգման աշխատանքները կիրականացվեն շենքի կառավարման մարմին համատիրության կողմից մինչև 10.04.2026 թվականը:

Նարեկացի թաղամաս հ.43 շենքի ջրահեռացման ներքին ցանցը գտնվում է աշխատանքային վիճակում, սակայն շենքին հարակից դիտահորերը հաճախակի խցանվում են, որը հնարավորինս սեղմ ժամկետում վերացվում է: Տանիքը գտնվում է սարքին վիճակում, վերին հարկի բնակարաններում կաթոցներ առկա չեն:

Նարեկացի թաղամաս հ.54 շենքի նկուղում շենքի բնակիչների կողմից լցվել է կենցաղային աղբ, որը կհեռացվի կառավարման մարմին համատիրության կողմից մինչև 10.04.2026 թվականը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ